ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 53	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Քաղվածք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	Չի հրապարակվել	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	21.12.2017
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	26.12.2017
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը		*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ՀՀ-ՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ» ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ի Ց

21 դեկտեմբերի 2017 թվականի N 53

11. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ» ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորում» պիլոտային ծրագրին՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Կ. Կարապետյան

2017 թ. դեկտեմբերի 26
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ	3
ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	6
ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ	7
ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ	8
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	9
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ	12
ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	15
ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ	16
ԱՂՅՈՒՍԿԱՆԵՐ	

ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

1. Պտղաբուծությունը Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության հնագույն ճյուղերից է:

2. Երկրի տարածքի ուղղաձիգ գոտիականությունը, հողակլիմայական պայմանների բազմազանությունը հնարավորություններ են տվել դարեր շարունակ մշակելու ծիրանենին, դեղձենին, սալորենին, կեռասենին, բալենին, խնձորենին, տանձենին, սերկևիլենին, ընկուզենին, նշենին, թզենին, նռնենին և պտղատու այլ տեսակներ: Դրանցից առավել լայն տարածում ու ժողովրդատնտեսական մեծ նշանակություն են ստացել հայկական ծիրանները և դեղձերը:

3. Հանրապետությունում պտղատու այգիների 70% գտնվում է ծովի մակերևույթից 400-1000, 23-ը՝ 1000-1500, 4.5-ը՝ 1500-2000, իսկ 2.5-ը՝ 2000 մետր և ավելի բարձրության վրա:

4. Գյուղատնտեսության ոլորտում իրականացված բարեփոխումներին նախորդող տարիներին հանրապետությունում սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացման պատճառով պտղատու այգիների տարածությունները 45.4 հազ. հեկտարից (1991թ.) զգալիորեն նվազեցին կազմելով 21.6 հազ. հեկտար (1998թ.): Սկսած 2002 թվականից պտղատու այգիների տարածքներն ավելացան և 2016 թվականին դրանք կազմեցին՝ 40.5 հազ. հեկտար: Հայաստանի Հանրապետությունում պտղաբուծության զարգացման միտումները 1990 – 2016 թվականներին ներկայացվում է Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետությունում պտղաբուծության զարգացման միտումները 1991 – 2016 թվականներին

Տարեթիվը	Տարածությունը հազ.հա		Համախառն բերքը հազ. տոննա		Բերքատվությունը g/հա
	ընդամենը	այդ թվում բերքատու հասակի	ընդամենը	այդ թվում՝ բերքատու տարածքից	
1991	45.4	35.1	166.7	164.3	46.8
1998	21.6	20.7	126.7	125.4	60.5
2006	35.4	30.2	286.0	283.4	93.9
2011	37.1	32.4	239.4	238.4	73.5

2012	39.3	34.1	331.7	330.9	97.0
2013	40.2	35.5	338.1	337.5	95.0
2014	40.1	36.0	291.0	290.8	80.8
2015	40.5	36.7	386.5	384.1	104.7
2016	40.5	36.6	242.6	241.9	66.1

5. Պտղատու այգիների տարածքները 2016 թվականին 2006 թվականի համեմատությամբ ավելացել են 5.6 հազար հեկտարով կամ 16%-ով, իսկ միջին բերքատվությունը 2015 թվականին (2016 թվականը անբարենպաստ տարի էր) 2006 թվականի համեմատ ավելացել է 11.5%-ով: Այգիների բերքատվությունը բարձրացել է ի հաշիվ վերջին 15 տարիներին հիմնված այգիների լիարժեքության, սորտային կազմի բարելավման և նոր այգիներում իրականացվող լիարժեք ագրոտեխնիկական միջոցառումների:

6. Հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետությունում պտղատու այգիների զանգվածային տարածությունները մասնատվեցին: Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» հրապարակման (2016 թվական) համաձայն պտղաբուծությամբ զբաղվում են հանրապետության 10 մարզերի 185,054 տնտեսավարողներ: Պտղատու այգիների մեկ տնտեսության բաժինը տատանվում է 0.1 հեկտարից մինչև 200 հեկտար, սակայն հիմնականում՝ մինչև 1.0 հեկտար է (107,897 տնտեսվարող կամ 58.3%), 1 և ավելի հեկտար այգիներ ունեցող տնտեսավարողների թիվը շուրջ 77,157 է: Այգետարածքների մասնատվածության պատճառով դժվարանում է մշակության աշխատանքների մեքենայացումը: Աշխատանքները հիմնականում կատարվում են ձեռքով, որի հետևանքով մեծանում է այգիների մշակության աշխատատարությունը, բարձրանում արտադրանքի ինքնարժեքը, նվազում ճյուղի շահութաբերությունը: Պտղաբուծությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների մեծ մասն իրենց փոքր չափերի ու արտադրանքի իրացման դժվարությունների հետևանքով վերածվել են բնամթերային տնտեսությունների, որտեղ անհնարին է կազմակերպել արդյունավետ ապրանքային արտադրություն:

Արդյունքում արտադրանքի ինքնարժեքը ստացվում է բարձր և անմրցունակ: Նման պայմաններում լուրջ խնդիրներ են առաջանում զանազան տեսակների պտուղների իրացման, վերամշակող ձեռնարկությունների հզորությունների օգտագործման, մարքեթինգային գործունեության բավարար կազմակերպման և վերամշակվողների կողմից հումքի գնման հարցերում:

7. Հանրապետությունում արտադրվող տնկիները հաճախ չեն համապատասխանում այգեհիմնում կատարող տնտեսավարողների պահանջներին:

8. Այգու հիմնման համար կատարվող ծախսերն էականորեն կախված են այգու համար նախատեսված տարածքից, ընտրված պտղատեսակից, սորտից, տնկման սխեմայից և բազմաթիվ այլ գործոններից:

9. Չնայած վերջին տարիներին ավելացել են ինտենսիվ նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ պտղատու և հատապտղատու այգիների տարածությունները (օպերատիվ տվյալների համաձայն՝ 2014 թվականին դրանք կազմում էին այգիների ընդհանուր տարածքի շուրջ 1.5%-ը, իսկ 2016 թվականին՝ շուրջ 4%), անհարժեշտություն է առաջացել խթանել 1-ից 10 հեկտար ինտենսիվ պտղատու և 0.5-ից 5 հեկտար հատապտղատու այգիների հիմնման նպատակով՝ հաշվի առնելով այգեհիմնման և մինչև լրիվ բերքատվության մեջ մտնելը դրանց վրա կատարվող ներդրումների խոշոր չափերը:

10. 1 հեկտար ինտենսիվ պտղատու այգու հիմնման և առաջին տարվա խնամքի համար ներդրումները՝ կախված պտղատեսակից, կազմում են 18641.7-23438.7 հազ. դրամ, իսկ 1 հա հատապտղանոցներինը՝ կախված մշակության տեսակից, 44497.6-100908.97 հազ. դրամ (աղյուսակ N 2, 3, 4, 5, 6):

11. Ինտենսիվ պտղաբուծության զարգացմանը խոչընդոտող գործոններից մեկն է տնտեսավարողների ֆինանսական միջոցների սղությունը և փոխառու (վարկային) միջոցների մատչելիության ցածր մակարդակն է:

12. Այս խոչընդոտի հաղթահարմանն ուղղված կարևորագույն միջոցառումներից են.

1) ինտենսիվ նոր տեխնոլոգիաներով այգեհիմնումների համար պետական աջակցություն ցուցաբերումը.

2) նոր ինտենսիվ տեխնոլոգիաներով այգիների հիմնման նպատակով սուբսիդավորված տոկոսադրույքներով, երկարաժամկետ, նպատակային վարկերի տրամադրումը:

13. Ինտենսիվ այգին ավանդական այգուց տարբերվում է միավոր տարածքի վրա բույսերի խտությամբ, կիրառվող նոր տեխնոլոգիաներով՝ էտի և ձևավորման նոր ձևերով, բույսերի սնուցումների տարբեր եղանակներով և այլն, որը այգու լրիվ բերքատվության մեջ մտնելուց հետո ապահովում է միավոր տարածքից առավելագույն բերքի ստացումը: Ծրագրի շրջանակներում հիմնված ինտենսիվ այգին պետք է ապահովված լինի կաթիլային ոռոգման ու կարկտապաշտպան ցանցային համակարգերով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

14. Ծրագրի իրականացման նպատակն է՝

1) մատչելի նպատակային վարկերի տրամադրման միջոցով ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետնկումների խթանմամբ հանրապետությունում պտղաբուծության զարգացումը,
2) պտղի և հատապտղի արտադրության ծավալների ավելացումը,
3) ներմուծման փոխարինումը և արտահանման ծավալների ավելացումը:

15. Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

1) ինտենսիվ այգիների հիմնման խոչընդոտների գնահատումը և դրանց մեղմման հնարավորությունների օգտագործումը,

2) ինտենսիվ այգիների պահանջարկի գնահատումը, որը կբացահայտվի այս պիլոտային ծրագրի շրջանակներում,

3) գյուղատնտեսությունում ինտենսիվ այգիներ հիմնելու համար մատչելի վարկավորման մեխանիզմների առաջադրումը,

4) հանրապետությունում ներդրվող ինտենսիվ այգիների տեսակների հստակեցումը,

5) ինտենսիվ այգիների համար պահանջվող վարկային միջոցների և վարկի տոկոսի սուբսիդավորվող մասի գնահատումը,

6) ինտենսիվ այգիների հիմնման գործընթացում վարկերի սուբսիդավորման ձևի հստակեցումը,

7) ծրագրի մոնիթորինգի իրականացման մեխանիզմի առաջադրումը,

8) ծրագրի ռիսկերի գնահատումը:

ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

16. Ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրը պետական բյուջեն է և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցները:

17. Ծրագրի իրականացման նպատակով անհրաժեշտ 4,431,945,000 դրամ վարկի տոկոսադրույքների սուբսիդավորման համար 2018-2024 թվականների ընթացքում կհատկացվի 1,695,218,963 դրամ, որից 2018 թվականին՝ 398,875,050 դրամ: Ըստ տարիների վարկի տոկոսադրույքների սուբսիդավորման համար պահանջվող ֆինանսական միջոցների գումարը ներկայացվում է Աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7

Ծրագրի իրականացման համար պահանջվող մայր գումարի (վարկի մնացորդի) և սուբսիդավորվող տոկոսադրույքի գումարի հաշվարկի արդյունքները*

Տարեթիվը	Մայր գումարը/ վարկի մնացորդը (դրամ)	Ընդամենը տոկոսագումարը (14%) (դրամ)	Սուբսիդավորման համար պահանջվող գումարը (դրամ)
2018	4,431,945,000	620,472,300	398,875,050
2019	4,431,945,000	594,619,288	382,255,256
2020	3,693,287,500	491,207,238	315,776,082
2021	2,954,630,000	387,795,188	249,296,906
2022	2,215,972,500	284,383,138	182,817,729
2023	1,477,315,000	180,971,088	116,338,556
2024	738,657,500	77,559,038	49,859,382
Ընդամենը		2,637,007,275	1,695,218,963

* մանրամասն հաշվարկները ներկայացված են աղյուսակ 8-ում:

18. Տրամադրվելիք սուբսիդավորման գծով կանխատեսվող ծախսերի ֆինանսական գնահատման համար հիմք են ընդունվել հետևյալ գործոնները՝

1) վարկերը տրամադրվելու են հայկական դրամով, առավելագույնը 14 %-ով, վարկի մարման ժամկետը 7 տարի, մայր գումարի 1 տարի արտոնյալ ժամանակահատվածով, մարման պարբերականությունը՝ 6 ամիս.
2) 1 հեկտար ինտենսիվ պտղատու այգու և հատապտղանոցի հիմնման և առաջին տարվա խնամքի համար ներդրումների չափը՝ կախված պտղատեսակից, համաձայն աղյուսակ N 2, 3, 4, 5, 6:

19. Ծրագրով վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման համար 2018 թվականին պահանջվում է 398,875.0 հազ. դրամ, իսկ ծրագրի իրականացման հետագա 2019-2024 թվականներին ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում բյուջետային հայտերի հիման վրա տվյալ տարվա համար անհրաժեշտ չափով գումար հատկացնելու միջոցով:

20. 1-ից 10 հեկտար ինտենսիվ պտղատու և 0.5-ից 5 հեկտար հատապտղատու այգիներ հիմնող տնտեսավարողներին վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կմեղմի տնտեսավարողների ֆինանսական ծանրաբեռնվածությունը:

21. Ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որ վարկը տնտեսավարողին տրամադրվի 5% տոկոսադրույքով:

22. Ծրագրի հաջող իրականացման դեպքում հնարավոր է սուբսիդավորման պայմանների վերանայում:

ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

23. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ սկսած 2018 թվականից:

24. Ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար վարկերը տրամադրվում են 1-ից 10 հեկտար ինտենսիվ պտղատու և 0.5-ից 5 հեկտար հատապտղատու այգիների հիմնման նպատակով: Ծրագրի շրջանակներում տրամադրված վարկային միջոցներով չի նախատեսվում հողի ձեռքբերում, ինչպես նաև ջերմոցային

տնտեսությունների հիմնում կամ համալրում՝ բացառությամբ հատապտուղների մշակության համար նախատեսվածներից :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

25. Ծրագրի իրականացումից ակնկալվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունքներ: Մասնավորապես՝ ծրագրով նախատեսված թիրախային քանակությունն ապահովվելու դեպքում առաջիկա 7 տարում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1) <u>քանակական</u>

ա. կխթանի նոր ինտենսիվ այգիների հիմնման գործընթացը, շուրջ 200 հեկտարով կավելանան ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետարածքները (հիմնվող հատապտղանոցների տեսակից կախված հնարավոր է ցուցանիշի փոփոխություն),

բ. ծրագրի իրականացման ընթացքում այգիներից ստացված եկամուտը կազմի շուրջ 5.8 մլրդ դրամ.

գ. ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում՝ տարեկան ներդրվող գումարի առնվազն 17%-ի չափով՝ ավելացված արժեքի (նախատեսվող գումարի շուրջ 60%-ը ներդրվող սարքավորումներն են) և շրջանառության (առնվազն՝ 5%) հարկերի տեսքով, ինչպես նաև, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ եկամտահարկի տեսքով,

դ. շուրջ 200 հեկտար իրտենսիվ այգիների հիմնման նպատակով 2018-2024 թվականներին կտրամադրվի 1,695,218,963 դրամ սուբսիդիա,

2) <u>որակական</u>

ա. հին ցածր բերքատու այգիներին կփոխարինեն բարձր բերքատու, թարմ սպառման (արտահանման) և վերամշակող ընկերությունների պահանջներին համապատասխանող սորտերի այգիները,

բ. կբարձրանա այգեգործության ոլորտի ներդրումային գրավչությունը,

գ. համայնքներում կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր,

դ. էականորեն կնվազեն բանկերի և վարկային կազմակերպությունների ռիսկերը,

ե. ծրագրի մասնակից տնտեսավարողների (ֆերմերի) ֆինանսական և սոցիալական վիճակի բարելավում, վճարունակության բարձրացում:

ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	Ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգետարածքների ավելացում
Համառոտ նկարագրությունը	Ծրագրով նախատեսված է շուրջ 200 հեկտար ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորում: Ծրագրի շրջանակներում տնտեսավարողներին վարկերը տրամադրվելու են 1-ից 10 հեկտար ինտենսիվ պտղատու և 0.5-ից 5 հեկտար հատապտղատու այգիների հիմնման նպատակով մինչև 7 տարի ժամկետով, տարեկան 5% -ով:
Նպատակը/ կարևորությունը	ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների տարածքների շուրջ 200 հեկարով ավելացման արդյունքում ակնկալվում է այդ այգիների բերքատվության աճ, ներկայիս ավանդական այգիների համեմատությամբ առնվազն երկու անգամ, արդյունքում՝ ծրագրի իրականացման ընթացքում դրանցից տնտեսավարողների ստացած եկամուտը կազմի շուրջ 5.8 մլրդ դրամ: Նոր հիմնված շուրջ 200 հա այգիներում կաթիլային ոռոգման համակարգի օգտագործման շնորհիվ ջրի խնայողությունը կկազմի շուրջ 50% : Ոռոգման համակարգով բույսերի սնուցման շնորհիվ կնվազի այգիներում մոլախոտերի դեմ պայքարի անհրաժեշտությանը:

Տեղեկատվության հավաքագրումը/ աղբյուրը	Տեղեկատվությունն ակնկալվում է ստանալ ինչպես մոնի-թորինգ իրականացնողներից՝ ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ գյուղական ֆինանսավորման կառույցից (ԳՖԿ) և ֆինանսա-կան կառույցներից, այնպես էլ նախարարության համապա-տասխան ստորաբաժանումների մասնագետների կողմից կատարվելիք հարցումների ու դիտարկումների արդյունքում: Տեղեկատվությունը հավաքագրվելու և վերլուծվելու է Ծրագրի իրականացման համար պատասխանտու ստորաբաժանման կողմից:
Հաշվարկման մեթոդը	Շրագրի շրջանակներում հիմնված այգիների տարածքները հաշվարկվում են տարածքի չափագրման հիման վար ներկայացված տեղեկատվության հիման վրա: Ինտենսիվության ցուցանիշը ճշտելու համար հաշվարկվում է 1 հեկտար տարածության վրա առկա տնկիների թիվը, որը պետք է առնվազն 2 անգամ գերազանցի ավանդական այգիներին բնորոշ թիվը:
Տեղեկատվության սահմանափակումները	Սահմանափակումը գործնականում բացակայում է:
Ցուցանիշի տեսակը	Ցուցանիշը չափում է Ծրագրի իրականացման ուղղակի արդյունքը
Չափման միավորը	Հեկտար
Ներկայացման եղանակը	Կատարողականները ներկայացվում են եռամսյակային կուտակային եղանակով
Հաշվետվողականության ցիկլը	Ամսական
Թույլատրելի շեղումը	Թիրախային մակարդակի համեմատ փաստացի ցուցանիշների 30-35 տոկոսային կետով շեղումը համարվում

	թույլատրելի, կախված հիմնված այգիների տեսակային կազմի
Պատասխանատվությունը	Տեղեկատվությունը ձեռք բերման և հաշվետվողականության համար պատասխանատու է ԳՖԿ-ն և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (համապատասխան ստորաբաժանումը)

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

26. Ծրագրի շրջանակներում ինտենսիվ այգիների հիմնման աշխատանքները պետք է իրականացվի մասնագիտացված կազմակերպության կողմից, որը կիրականացնի ծրագրի պահանջներին համապատասխան այգեհիմնման, կաթիլային ոռոգման և կարկտապաշտպան ցանցային համակարգերի ներդրման (մոնտաժման) աշխատանքները, շահառուներին առնվազն մեկ տարի կմատուցի անվճար խորհրդատվություն կաթիլային ոռոգման և կարկտապաշտպան ցանցային համակարգերի օգտագործման և սպասարկման ուղղությամբ, կիրականացնի դրանց երաշխիքային սպասարկում՝ առնվազն մեկ տարի ժամկետով:

27. Ծրագրով 2018 թվականից սկսած մասնակի կսուբսիդավորվի ինտենսիվ այգիների հիմնման նպատակով, վարկային պայմանագիր կնքած տնտեսավարողների վարկի տոկոսադրույքը՝ պայմանագրի գործողության ընթացքում, ծրագրի շրջանակներում կնքված վարկային պայմանագրերին համապատասխան:

28. Ծրագրի մասնակիցներն են.

1) Ծրագրի պայմաններին համապատասխան վարկային պայմանագիր կնքած գյուղատնտեսությունում տնտեսավարողները (իրավաբանական անձինք, այդ թվում գյուղատնտեսական կոոպերատիվները, անհատ ձեռնարկատերերը): Ծրագրի շրջանակներում նույն վարկառուին տրամադրվող վարկերի ընդհանուր գումարի մնացորդ չպետք գերազանցի 270.0 մլն դրամը, իսկ հատապտղանոցի դեպքում՝ 500.0 մլն. դրամը,

2) ցանկացած բանկ և վարկային կազմակերպություն, որը սույն ծրագրի պայմաններին համապատասխան վարկ է տրամադրում ինտենսիվ այգու հիմնման համար:

Ծրագրի մասնակից կարող են դառնալ այն բանկերը և վարկային կազմակերպությունները, որոնք բավարարում են ծրագրի պահանջներին,

3) մասնագիտացված կազմակերպությունները՝ իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ),

5) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

29. Ինտենսիվ այգիների հիմնման համար տրամադրվող վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը.

1) ինտենսիվ այգիների հիմնման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են բանկերը և վարկային կազմակերպությունները, որոնք սույն ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրում են վարկեր,

2) վարկի մարման գործընթացը իրականացվում է մայր գումարի վեց ամսյա պարբերականությամբ վճարման եղանակով, վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի հաշվով,

3) վարկառուի կողմից վարկի մայր գումարի ժամկետից շուտ կատարված մարումների համար բանկի և վարկային կազմակերպության կողմից տույժ և տուգանք չի հաշվարկվում ու չի գանձվում,

4) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը իրականացվում է վարկի մայր գումարի և վարկի տոկոսադրույքի չսուբսիդավորվող մասի փաստացի մարումների հիման վրա,

5) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է բանկի կամ վարկային կազմակերպության համապատասխան հաշվին՝ տվյալ ֆինանսական կազմակերպության հայտերի հիման վրա: Հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ԳՖԿ-ն և տվյալ ֆինանսական կազմակերպության միջև կնքվող պայմանագրով: Պայմանագրի օրինակելի ձևը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ»

պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ.

6) բանկը կամ վարկային կազմակերպությունը վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը ԳՖԿ-ին է ներկայացնում ամիսը մեկ անգամ՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: ԳՖԿ-ն պարտավոր է հայտն ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում բավարարել հայտը և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցել համապատասխան բանկի կամ վարկային կազմակերպության հաշվի համարին, եթե հայտը բավարարում է Ծրագրի պահանջներին:

30. Ինտենսիվ այգիների հիմնման համար տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցումը.

1) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կարող է դադարեցվել, եթե առկա են տվյալ վարկի մասով վարկառուի մեկ տարվա (նախորդ 12 ամիսներ) կտրվածքով հանրագումարային վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ վարկատուի հանդեպ կամ վարկատուի հանդեպ ունեցած ժամկետանց պարտավորությունների հետևանքով՝ համաձայն 23.04.1999 թվականի ՀՀ կենտրոնական բանկի կողմից հավանություն տրված և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 1999 թվականի հունիսի 4-ի թիվ 214-Ա հրամանով հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի»՝ օբյեկտիվ չափանիշների, վարկը «ստանդարտ» դասակարգված չէ,

2) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կարող է դադարեցվել, երբ չի պահպանվում սահմանված պահանջները, կամ չի պահպանվել վարկի տրամադրման պայմանները, կամ ԳՖԿ-ն մոնիթորինգի արդյունքում հայտնաբերում է սույն ծրագրի պայմանների խախտում,

3) վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման և կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում մինչ այդ պահը տրամադրված սուբսիդավորման գումարը ենթակա է վերադարձման (սուբսիդավորված գումարի վերադարձը ԳՖԿ-ին իրականացնում է Ֆինանսական կառույցը): Վերը նշված մնացած դեպքերում վարկի սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի նախորդ մարման օրվանից սկսած:

ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

31. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է ԳՖԿ-ն՝ բանկերի և վարկային կազմակերպությունների հայտերի վերլուծության և վարկառուների ընտրանքային ստուգումների հիման վրա՝ համաձայն ԳՖԿ ներքին ընթացակարգի: Վարկի տրամադրումից 2 ամիս անց ֆինանսական կառույցի կողմից իրականացվում է նպատակային մոնիթորինգ, որից հետո այն իրականացվում է համաձայն ֆինանսական կառույցի ներքին ընթացակարգերի: Ֆինանսական կառույցը ԳՖԿ-ի և Ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով սահմանված ձևով հաշվետվություն է ներկայացնում ԳՖԿ-ին:

32. Ծրագրի շրջանակներում վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի ամփոփման արդյունքում ԳՖԿ-ն ձևավորում է վիճակագրական տվյալների բազա, որը ներառում է տոկոսադրույքի սուբսիդավորվող վարկերի մասին՝ ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

33. ԳՖԿ-ն վարկառուների փաստաթղթերի ընտրանքային ստուգումներ կարող է իրականացնել ծրագրի պայմաններին համապատասխանությունն ստուգելու նպատակով:

34. Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում Ֆինանսական կառույցը պարտավոր է Վարկառուի գործող վարկը հանել վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից և միակողմանիորեն փոփոխել վարկի տոկոսադրույքը, կիրառելով տվյալ Ֆինանսական կառույցում գործող գյուղատնտեսական կամ բիզնես վարկերի համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք:

35. ԳՖԿ-ն պարտավոր է առնվազն 30 օրը մեկ անգամ հաշվետվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

36. Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում.

1) վարկային պայմանագրերի մասին տեղեկատվություն, ըստ մարզերի համայնքների շահառուների, ըստ շաառուների վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարի, հիմնված ինտենսիվ այգիների տարածքի, տեսակի մասին,

2) տեղեկատվություն մոնիթորինգի արդյունքների մասին,

3) տեղեկատվություն հայտնաբերված խախտումների մասին,

4) առաջարկություններ ծրագրի պայմանների բարելավման կամ կատարելագործման վերաբերյալ և այլն:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

37. Ծրագրի իրականացման հնարավոր ռիսկեր են՝

1) Անբարենպաստ կլիմայական պայմանների (ձմռան երկարատև սառնամանիքներ, գարնանային ցրտահարություն, փոթորիկ) հետևանքով տրամադրված վարկային ռեսուրս-ների մայր գումարի վերադարձելիության և տոկոսադրույքի վճարման անհնարինությունը,

2) Ծագրի իրականացման համար մասնագիտացված ընկերությունների կողմից ծառայության մատուցման համար բարձր գների առաջադրումը,

3) նախատեսված վարկային ռեսուրսների ոչ ամբողջական տեղաբաշխման հետևանքով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նախատեսված գումարներին համարժեք հայտերի բացակայությունը,

4) տարբեր գործոններով պայմանավորված վարկառուների ակնկալվող եկամուտների ցածր մակարդակը՝ պայմանավորված օրինակ բերքի շուկայական գնի հնարավոր անկումով,

5) ֆինանսական կառույցների կողմից ոչ մատչելի պայմանների առաջադրումը,

6) ինտենսիվ այգիների հիմնման նախատեսվածից ավելի մեծ պահանջարկը,

38. Ռիսկերի մեղմման հնարավորություններն են՝

1) Ծրագրի շրջանանակներում ինտենսիվ պտղատու և հատապտղատու այգիների հիմնման նպատակով տոկոսադրույքի սուբսիդավորման պայմանագրում մատչելի մեխանիզմների առաջադրումը,

2) Մասնագիտացված ընկերությունների հետ սերտ համագործակցությունը և ծագած խնդիրներին օպերատիվ լուծումներ տալը,

3) Ինտեսնսիվ այգիների հիմնման համար անհրաժեշտ տնկանյութի, կաթիլային համակարգի և կարկտապաշտպան ցանցերի և դրանց մոնտաժման դետալների տեղական արտադրության կազմակերպումը:

N 2 աղյուսակ

Հաշվարկ
1 հեկտար խնձորենու ինտենսիվ այգու հիմնման և 1-ին տարվա խնամքի աշխատանքների համար պահանջվող ծախսերի

Տնկման սխեման 4 x 1.0 մ

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, դրամ
Խոր վար	հա	1	40000	40,000
Չիզել	հա	1	25000	25,000
Քարհավաք	հա	1	120000	120,000
Հողամասի տեղաձևում	հա	1	100000	100,000
Տնկման փոսերի հորատում	հատ	2500	220	550,000
Տնկանյութի արժեք	հատ	2500	3000	7,500,000
Տնկանյութի նախապատրաստում և տեղափոխում	հատ	2500	50	125,000
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	$մ^3$	40	2000	80,000
Տնկում և տնկման ցցերի ամրացում	հատ	2500	120	300,000
Բամբուկի ցցեր	հատ	2500	300	750,000
Ջրում	հազ.$մ^3$	2.5	11000	27,500
Կաթիլային ոռոգման համակրգը սպասարկող բանվոր 8 ամիս	ամիս	8	150000	1,200,000
Միջբնային տարածություններ քաղհան-փխրեցում ձեռքով (2 անգամ)	հատ	5000	100	500,000
Միջշարային տարածությունների կուլտիվացիա (2 անգամ)	հա	2	25000	50,000
Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (2 անգամ)	հա	2	15000	30,000
Թունանյութեր				30,000
Գոմաղբ	տ	20	5000	100,000
Ամոնիակային սելիտրա	կգ	50	120	6,000
Սուպերֆոսֆատ	կգ	120	140	16,800
Կալիումական աղ	կգ	50	140	7,000
Լուծելի համալիր պարարտանյութ սնուցման համար	կգ	85	2000	170,000
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր				711,400
Կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում (ներառյալ պոմպակայան)	հա			1,500,000
Ընդամենը այգու հիմնման և 1-ին տարվա խնամքի համար				13,938,700
Կարկտապաշտպան համակարգի տեղակայում	հա			9,500,000
Ընդամենը ծախսեր				23,438,700

N 3 աղյուսակ

Հաշվարկ
1 հեկտար ծիրանենու, դեղձենու/նեկտարինի և սալորենու ինտենսիվ այգու հիմման և 1-ին տարվա խնամքի աշխատանքների համար պահանջվող ծախսերի

Տնկման սխեման 4 x 1.65 մ

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր դրամ
Խոր վար	հա	1	40000	40,000
Չիզել	հա	1	25000	25,000
Քարհավաք	հա	1	120000	120,000
Հողամասի տեղաձևում	հա	1	100000	100,000
Տնկման փոսերի հորատում	հատ	1500	220	330,000
Տնկանյութի արժեք	հատ	1500	3000	4,500,000
Տնկանյութի նախապատրաստում և տեղափոխում	հատ	1500	50	75,000
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	$մ^3$	40	2000	80,000
Տնկում և տնկման ցցերի ամրացում	հատ	1500	120	180,000
Բամբուկի ցցեր	հատ	1500	300	450,000
Ձրում	հազ.$մ^3$	2.5	11000	27,500
Կաթիլային ոռոգման համակրգը սպասարկող բանվոր 8 ամիս	ամիս	8	150000	1,200,000
Միջբնային տարածություններ քաղհան-փխրեցում ձեռքով (2 անգամ)	հատ	3000	100	300,000
Միջշարային տարածությունների կուլտիվացիա (2 անգամ)	հա	2	25000	50,000
Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (2 անգամ)	հա	2	15000	30,000
Թունանյութեր				30,000
Գոմաղբ	տ	20	5000	100,000
Ամոնիակային սելիտրա	կգ	50	120	6,000
Սուպերֆոսֆատ	կգ	120	140	16,800
Կալիումական աղ	կգ	50	140	7,000
Լուծելի համալիր պարարտանյութ սնուցման համար	կգ	85	2000	170,000
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր				504,400
Կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում (ներառյալ պոմպակայան)	հա			1,800,000
Ընդամենը այգու հիմման և 1-ին տարվա խնամքի համար				10,141,700
Կարկտապաշտպան համակարգի տեղակայում	հա			8,500,000
Ընդամենը ծախսեր				18,641,700

N 4 աղյուսակ

Հաշվարկ
1 հեկտար կեռասենու ինտենսիվ այգու
հիմնման և 1-ին տարվա խնամքի աշխատանքների համար պահանջվող ծախսերի

Տնկման սխեման 4 x 1.65 մ

Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Ֆիզիկական ծավալները	Միավորի արժեքը, դրամ	Ընդամենը ծախսեր, դրամ
Խոր վար	հա	1	40000	40000
Չիզել	հա	1	25000	25000
Քարհավաք	հա	1	120000	120000
Հողամասի տեղաձևում	հա	1	100000	100000
Տնկման փոսերի հորատում	հատ	1500	220	330000
Տնկանյութի արժեք	հատ	1500	3500	5250000
Տնկանյութի նախապատ-րաստում և տեղափոխում	հատ	1500	50	75000
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	$մ^3$	40	2000	80000
Տնկում և տնկման ցցերի ամրացում	հատ	1500	120	180000
Բամբուկի ցցեր	հատ	1500	300	450000
Ջրում	հազ.$մ^3$	2.5	11000	27500
Կաթիլային ոռոգման համակրգը սպասարկող բանվոր 8 ամիս	ամիս	8	150000	1200000
Միջբնային տարածություններ քաղհան-փխրեցում ձեռքով (2 անգամ)	հատ	3000	100	300000
Միջշարային տարածությունների կուլտիվացիա (2 անգամ)	հա	2	25000	50000
Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ (2 անգամ)	հա	2	15000	30000
Թունանյութեր				30000
Գոմաղբ	տ	20	5000	100000
Ամոնիակային սելիտրա	կգ	50	120	6000
Սուպերֆոսֆատ	կգ	120	140	16800
Կալիումական աղ	կգ	50	140	7000
Լուծելի համալիր պարարտանյութ սնուցման համար	կգ	85	2000	170000
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր				532900
Կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում (ներառյալ պոմպակայան)	հա			1800000
Ընդամենը այգու հիմնման և 1-ին տարվա խնամքի համար				10920200
Կարկտապաշտպան համակարգի տեղակայում	հա			8500000
Ընդամենը ծախսեր				19420200

N 5 աղյուսակ

Հաշվարկ 1 հա ազնվամորու և մոշի ինտենսիվ այգիների հիմնման և առաջին տարվա խնամքի ծախսերի հաշվարկ				
Աշխատանքի անվանումը	**Չափի միավորը**	**Ֆիզիկական ծավալները**	**Միավորի արժեքը,**	**Ընդամենը ծախսեր**
			դրամ	**հազ. դրամ**
Խոր վար	հա	1	40000	40.0
Չիզել	հա	1	25000	25.0
Քարհավաք	հա	1	120000	120.0
Հողամասի տեղաձևում	հա	1	100000	100.0
Տնկանյութի արժեք	հատ	8800	1100	9680.0
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	կգ	26400	408	10771.2
Մարգերի պատրաստում և տնկում	շարք	44	24000	1056.0
Թարմային համակարգ	հա	1	3840000	3840.0
Ջրում	հազ.մ^3	2.25	11000	24.8
Մարգերի մուլչապատում	գծմ	4400	480	2112.0
Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ	հա	1	200000	200.0
Լուծելի համալիր պարարտանյութ սնուցման համար	կգ	450	800	360.0
Այլ պարարտանյութեր	կգ	200	320	64.0
Բերքահավաք	կգ	15000	100	1500.0
Խնամքի ծախսեր	մարդ.օր	140	4000	560.0
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր	հա	1		1494.65
Կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում (ներառյալ պոմպակայան)	հա	1	5000000	5000.0
Կարկտապաշտպան համակարգի տեղակայում	հա	1	7550000	7550.0
Ընդամենը այգու հիմնման և 1-ին տարվա խնամքի համար				**44497.6**

N 6 աղյուսակ

Հաշվարկ
1 հաթուն եղերում ազնվամորու և մոշի ինտենսիվ այգիների հիմնման և առաջին տարվա խնամքի ծախսերի հաշվարկ

Աշխատանքի անվանումը	**Չափի միավորը**	**Ֆիզիկական ծավալները**	**Միավորի արժեքը, դրամ**	**Ընդամենը ծախսեր հազ. դրամ**
Խոր վար	հա	1	40000	40.00
Չիզել	հա	1	25000	25.00
Քարհավաք	հա	1	120000	120.00
Հողամասի տեղաձևում	հա	1	100000	100.00
Տնկանյութի արժեք	հատ	8800	1100	9680.00
Հողախառնուրդի պատրաստում և տեղափոխում	կգ	39600	408	16156.80
Մարգերի պատրաստում և տնկում	շարք	44	24000	1056.00
Թարմային համակարգ	հա	1	3840000	3840.00
Ջրում	հազ.մ^3	2.25	11000	24.75
Մարգերի մուլչապատում	գծմ	4400	480	2112.00
Պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ	հա	1	200000	200.00
Լուծելի համալիր պարարտանյութ սնուցման համար	կգ	450	800	360.00
Այլ պարարտանյութեր	կգ	200	320	64.00
Բերքահավաք	կգ	25500	100	2550.00
Խնամքի ծախսեր	մարդ.օր	420	4000	1680.00
Չնախատեսված այլ աշխատանքներ և ծախսեր	հա	1		1900.43
Կաթիլային ոռոգման համակարգի տեղադրում (ներառյալ պոմպակայան)	հա	1	5000000	5000.00
Թունելների տեղակայում	հա	1	56000000	56000.00
Ընդամենը թունելներում այգու հիմնման և 1-ին տարվա խնամքի համար				**100908.98**

N 8 աղյուսակ

Հաշվարկ

Ըստ տարիների վարկի տոկոսադրույքների սուբսիդավորման համար պահանջվող ֆինանսական միջոցների

200 ՀԱ	Մուտքային տվյալներ
վարկի սկզբնական գումարը	**4,431,945,000**
Ժամկետը	**84**
Տոկոսադրույքը	**14.00%**
Սուբսիդավորման տոկոսադրույքը	**9.00%**
1 հա միջին արժեք	**22,159,725**

7

101,976,979

Ընդամենը 84 ամսվա վճարումներ	7,068,952,275	2,637,007,275	4,431,945,000		1,695,218,963	941,788,313	5,373,733,313
Առաջին 12 ամսվա համար	620,472,300	620,472,300	0		398,875,050	221,597,250	221,597,250

Վճարումների ամիսներ	Վարկի մնացորդը	Ընդամենը ամսական վճարը	Տոկոսագումարը	Վարկի մարում		Սուբսիդա-վորման գումարը	Տոկոսագումարը սուբսիդավորումից հետո	**Ընդամենը վճար**
6	4,431,945,000	310,236,150	310,236,150	0		199,437,525	110,798,625	110,798,625
12	4,431,945,000	310,236,150	310,236,150	0		199,437,525	110,798,625	110,798,625
18	4,431,945,000	679,564,900	310,236,150	369,328,750		199,437,525	110,798,625	480,127,375
24	4,062,616,250	653,711,888	284,383,138	369,328,750		182,817,731	101,565,406	470,894,156
30	3,693,287,500	627,858,875	258,530,125	369,328,750		166,197,938	92,332,188	461,660,938
36	3,323,958,750	602,005,863	232,677,113	369,328,750		149,578,144	83,098,969	452,427,719
42	2,954,630,000	576,152,850	206,824,100	369,328,750		132,958,350	73,865,750	443,194,500
48	2,585,301,250	550,299,838	180,971,088	369,328,750		116,338,556	64,632,531	433,961,281
54	2,215,972,500	524,446,825	155,118,075	369,328,750		99,718,763	55,399,313	424,728,063
60	1,846,643,750	498,593,813	129,265,063	369,328,750		83,098,969	46,166,094	415,494,844
66	1,477,315,000	472,740,800	103,412,050	369,328,750		66,479,175	36,932,875	406,261,625
72	1,107,986,250	446,887,788	77,559,038	369,328,750		49,859,381	27,699,656	397,028,406
78	738,657,500	421,034,775	51,706,025	369,328,750		33,239,588	18,466,438	387,795,188
84	369,328,750	395,181,763	25,853,013	369,328,750		16,619,794	9,233,219	378,561,969